



Ռ.Ռ. հասարակական պարզ և մեղմ պալատը ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հրանուշ Հակոբյանին պետական, քաղաքական ակտիվ գործունեության, ռուս և հայ ժողովուրդների դավաճան քարեկամության ամրապնդման գործում ունեցած անուրանալի ու ծանրակշիռ վաստակի համար պարգևատրել է «Պետրոս Առաջին» առաջին աստիճանի շքանշանով:

«Լուսարձակ» իր խմբագրական գծի և ընթերցողների անունից շնորհավորում է Հրանուշ Հակոբյանին բարձր պարգևի առթիվ, որան մարդուն քաղաքացիություն և արգասավոր գործունեություն՝ հանուն հայ-ռուսական բարեկամության, հայկական պետականության ամրապնդման, մեր երկրում քաղաքացիական հասարակության ձևավորման և ժողովրդավարության հաստատման:

ՆԱՅԵՐԸ FORBES-ՈՒՄ


Հայաստանն ընդգրկված չէ այն 56 երկրների շարքում, որոնք ունեն գոնե 1 միլիարդատեր: Ամենահարուստ հայր՝ ամերիկացի Քրոջ Քրոջորյանը նախորդ տարվա համեմատ նահանջել է 10 տեղով՝ հաստատվելով 41-րդ հորիզոնականում, բայց փոխարենը նրա կարողությունը 1 տարվա ընթացքում ավելացել է 1 միլիարդով: Հայազգի մնացած միլիարդատերերն իրենց գործունեությունը ծավալում են Ռուսաստանում: Նրանց շարքում առաջատարը «РОСГОСՏՐԱՅ» խմբի նախագահ Դանիլ Խաչատուրովն է, ում կարողությունը գնահատվում է 2 մլրդ դոլար: Այդպիսով Խաչատուրովը աշխարհի 1125 միլիարդատերերի շարքում 605-րդ ամենահարուստ մարդն է: Նրան հետևում են Սարկիսով եղբայրները՝ Սերգեյը և Նիկոլայը, ովքեր իրենց հիմնական գործունեության ոլորտ են ընտրել ապահովագրությունը («Ресо Гарант») ընկերության հիմնական բաժնետերերն են): Նրանց կարողությունը գնահատվում է 1,5 մլրդ դոլար, և միլիարդատերերի ցուցակում նրանք կիսում են 785-րդ տեղը: Մեկ այլ հայ գործարար՝ «Трoսкa Двaлoг» խմբի խորհրդի նախագահ և հիմնական բաժնետեր Ռուբեն Վարդանյանը ցուցակում զբաղեցնում է 897-րդ տեղը 1,3 մլրդ դոլար կարողությամբ, FORBES-ի գնահատականներն ավելի համեստ են ռուսական «Финанс» ամսագրի հետ համեմատած: Վերջինիս վարկածով, որը հրապարակվեց փետրվարի վերջին հաշատուրովի կարողությունները գնահատվել էին 2,8, Սարկիսով եղբայրներինը՝ 1,65, իսկ Վարդանյանինը՝ 1,5 մլրդ դոլար: Ինչպես վերոհիշյալ ռուսական ամսագրի, այնպես էլ FORBES-ի վարկանիշային աղյուսակից դուրս է մնացել «Տաշիր» խմբի նախագահ և սեփականատեր Սամվել Կարապետյանը, ում կարողությունը տարբեր գնահատականներով գնահատվում է 2,2 - 2,7 մլրդ դոլար:

Մամուլից

ԼՈՒՍԱՆՈՒՅԱՆԿ

ԱՆԿԱՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ INDEPENDENT WEEKLY NEWSPAPER НЕЗАВИСИМАЯ ЕЖЕНЕДЕЛЬНАЯ ГАЗЕТА

Հունիս, 2008 թ. քիվ 7 (4547)



ՆՇՎԵՑ ԱՌԱՋԻՆ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅԻՍՅԱՆ ՆԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ 90-ԱՄՅԱ ՏԱՐԵԼԻՑԸ

Մայիսի 28-ին Հայաստանում մեծ շուրջով նշվեց Սարգսյանների, Բաշ-Ապարանի, Ղարաբաղի հերոսամարտերի և Հայաստանի առաջին հանրապետության 90-ամյակը: Այդ առթիվ մարզկենտրոն վանաձորի Կոտրած եկեղեցու տարածքում տեղի ունեցավ Ղարաբաղի հերոսամարտի ճակատավորների մատուցած ծառայության հանդիսավոր բացումը, որին մասնակցում էին ՀՀ վարչապետ Ս. Սարգսյանը, ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Ա. Գևորգյանը, զինվո-

րականության, հասարակայնության ներկայացուցիչներ, բազմաթիվ լուսնիներ: Այնուհետև Հայքի հրապարակում կայացան զինվորական շքերթ, մարզիկների ցուցարարական ելույթներ: Կազմակերպվել էր զեղանկարչական և դեկորատիվ աշխատանքների ցուցահանդես վաճառք: Տեղի ունեցավ նաև տոնական համերգ, իսկ ուշ երեկոյան՝ հրավառություն:

Մեդիայի և կրթության



ԱՎԱՆԳԱՐԴԻ - 85 ՏԱՐԵԿԱՆ Է

«Ավանգարդ» անկախ պարբերաթերթը դարձավ 85 տարեկան: Իր գոյության երկար ու ձիգ տարիների ընթացքում «Ավանգարդը» անուրանալի դեր է ունեցել երիտասարդության հայրենասիրական, բարոյական, գեղագիտական դաստիարակության գործում: «Ավանգարդը» լինելով Հայաստանի առաջին երիտասարդական պարբերաթերթը, եղել է իր ժամանակի տարեգիրն ու ճշմարիտ վավերագրողը: Եղել է նաև մտավորական կարգերի պատրաստման մի իսկական դարբնոց: «Ավանգարդին» տարբեր տարիների աշխատակցել են Հ. Շիրազը, Վ. Դավթյանը, Հ. Սահյանը, Հ. Մաթևոսյանը, Լ. Կրոյանը, Վ. Բալայանը, Վ. Պետրոսյանը, Մ. Գալշոյանը, Լ. Մանուկյանը, Ա. Հովհաննիսյանը, Վ. Մուրադյանը և շատ ուրիշներ: Այժմ էլ թերթը խմբագրում է երկարամյա ավանգարդի Ջուլիետ Մարտիրոսյանը, որն աչքի է ընկնում կազմակերպչական ունակություններով, օժտվածությամբ, արժանապատվությամբ: Նրա գլխավորությամբ թերթը կարողացավ դիմագրավել հասարակարգի փոփոխության ցնցումներին, հաղթահարել առկա ֆինանսական տեխնիկական և այլ դժվարություններ՝ պահպանելով սեփական դիմագիծը և գտնել իր նոր խոսքը:

Ես եղել եմ ՀԼԿԵՄ Սպիտակի շրջկոմի առաջին քարտուղար և բնականաբար առնչություն եմ ունեցել «Ավանգարդի» հետ: Բազմիցս Սպիտակ են այցելել «Ավանգարդի» տարբեր բաժինների աշխատակիցներ և հանրապետության ընթերցողներին ներկայացրել Սպիտակում ապրող և արարող երիտասարդ ու ավագ սերնդի մարդկանց աշխատանքային սխրանքները: Հպարտությամբ եմ հիշում, որ իմ աշխատած տարիներին շրջանի երիտասարդության ակտիվի հետ հանդիպման եմ հրավիրել 70-80-ական թվականների թերթի գլխավոր խմբագիր, երջանակահիշատակ Լևոն Մանուկյանին: Հանդիպումը դարձավ շրջանի երիտասարդությանը հուզող հարցերի ու դրանց պատասխանները ստանալու թեժ բանավեճ, երկխոսություն, որի արդյունքում մասնակիցները հեռացան երկուստեք բավարարված և հագուրդ տված ծագած հետաքրքրություններին: Ահա այդ երանելի օրերից, բայց ոչ լցված կարոտախոսով, իմ արխիվում մնացել է այս լուսանկարը, որն էլ ներկայացնում եմ ընթերցողներին: Իսկ «Ավանգարդի» կոլեկտիվի անդամներին մաղթում եմ ամենայն բարիք, երջանկություն, առողջություն և նորանոր ստեղծագործական նվաճումներ:



Նկարում՝ աջից նախ «Ավանգարդ» թերթի գլխավոր խմբագիր Լևոն Մանուկյանը: Իսկ Սպիտակի շրջկոմի 2-րդ քարտուղար Անդրանիկ Կալոյանը և 1944 Սպիտակի շրջկոմի 1-ին քարտուղար Խաչատուր Խաչատրյանը

Վերջերս Երևանի Կամերային թատրոնում մեծ շուրջով նշվեց թերթի հոբելյանը: Այն սկսվեց եկեղեցական պաշտոնով և ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի կոնդակի ընթերցմամբ: Այնուհետև հանդես եկավ թերթի գլխավոր խմբագիր Ջ. Մարտիրոսյանը, որին հաջորդեցին տոնական ուղերձները՝ պետական կառույցներից, հասարակական կազմակերպություններից, կուսակցություններից, ստեղծագործական միություններից, բարեգործներից ու այլ կազմակերպություններից: Հանդիսությունը ընդմիջվում էր հանրապետության նշանավոր ու ճանաչված երգիչ-երգչուհիների կատարումներով:

Յ. Ափուջանյան
Մայիսի 28 - Երևան

ՄՐՑՈՒՅՑԹ

Համաշխարհային հայկական կոնգրեսը, Ռուսաստանի հայերի միությունը և Հայաստանի ժողովրդի միությունը հայտարարում են 2008թ. ժողովրդական լավագույն հրապարակման մրցույթ՝

«Հայաստանը համայն հայերի հայրենիքն է»
խորագրով:

Մրցույթին ներկայացվող նյութերը պետք է արտացոլեն և իմաստավորեն պատմական վճռորոշ իրադարձությունները, համազգային զարթոնքի շարունակականությունը, այն հիմնախնդիրները, որոնք ծառայած են ազգային երկու պետականությունների ամրապնդման ու հզորացման արդի փուլում:

Մրցանակային ֆոնդը 10.000 ԱՄՆ դոլարի համարժեք դրամ է, որը հավասարապես կբաշխվի բոլոր անվանակարգերի միջև:

Սահմանվում են հետևյալ անվանակարգերը.

1. Հայաստանի հանրապետությունը աշխարհի համայն հայերի հայրենիքն է, հպարտությունը:
2. Ազգային միասնականությունը՝ հայրենիքի հզորացման գրավական:
3. Ապրել Հայաստանում և Հայաստանի համար:
4. Ժողովուրդն է երկրի տերը, զինվորն ու մշակը:
5. Հոգևոր հայրենիքի սահմանները:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի ժողովրդի միության այն անդամները, որոնց ստեղծագործությունները տպագրվել են մամուլում, հաղորդվել են ռադիոյով, հեռարձակվել հեռուստատեսությամբ: Մրցույթի նյութերը ներկայացնել մինչև 2009թ. հունվարի 31-ը:

Հասցեն՝
Երևան, Պուշկինի 3ա,
Հայաստանի ժողովրդի միություն,
հեռ. 56-12-76:

* * *

Ըստ պաշտոնական վիճակագրության, այս տարվա ապրիլի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչությունը կազմել է 3 միլիոն 231 հազար մարդ: Դրանցից 2 մլն 69 հազարը կազմել է քաղաքային բնակչությունը: Երևանի բնակչությունը կազմել է 1 մլն 108 հազար մարդ: Մարզերից ամենաշատ բնակչություն ունի Լոռու մարզը՝ 281 հազար 800 մարդ: Ամենաքիչը Վայոց ձորի բնակչությունն է՝ 55 հազար 800:

ՀԱՄԱՐՈՒՄ	«ԼՈՒՍԱՆՈՒՅԱՆ» ՀՅՈՒՐԱՍՐԱՀՈՒՄ Է ՀՀ ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՎՈՒՐՅԱ ԱՐԱՄԱՅԻՍԻ ԲԱՊԱՅԱՆԸ	
	ԷԶ 2	
	ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԶԱՌՈՒՆԵՐՈՒՄ (դրվագներ Արևաշող գյուղի ստեղծման պատմությունից)	
	ԷԶ 3	
	ԷՆԵՐԳԻԱՅԻ ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆ	
	ԷԶ 4	



«ԼՈՒՍԱՐՉԱԿԻ» ՆՅՈՒՐԱՍՐԱՆՈՒՄ Է ՆՏ ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՎՈՒՈՐՅԱ ԱՐԱՄԱՅԻՄԻ ԲԱԴԱԼՅԱՆԸ

Ծնվել է 1948թ. մայիսի 12-ին Սպիտակ քաղաքում: 1983թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը: Մասնագիտությամբ ինժեներ-շինարար է: 1966-1969թթ. աշխատել է Սպիտակի շաքարի գործարանում՝ բանվոր, ինժեներ-կոնստրուկտոր, գլխավոր տեխնոլոգ: 1969-1981թթ. Լենինյան շրջանի քրոնիկ-կոյուղու վարչության գլխավոր ինժեներ, պետ: 1981-1995թթ. Երևանի քիմիական տիվների գործարանի ինժեներ, փոխտնօրեն, տնօրեն: 1995-1999թթ. «Քիմիա-Սպիտակ» ԲԲԸ-ի նախագահ: 1990թ. մինչև այժմ 77 Փերագույն հորիզոնի, այնուհետև՝ Աժ-ի պատգամավոր: Երեք անգամ պատգամավոր է ընտրվել մեծամասնական ընտրակադրով, մեկ անգամ՝ «Միասնություն» դաշինքի, մեկ անգամ էլ՝ 774 համամասնական ընտրացուցակներով: Անկուսակցական է: Անուսնացած է, ունի 2 դուստր, 4 թոռնիկ:

Վերջերս լրացավ Վոլոդյա Բաղայանի 60-ամյակը, այդ առթիվ հրատարակում ենք մեր թերթի գլխավոր խմբագիր Ֆահրադ Ափուջանյանի խոսքը:

Բարեգործը, պետական, քաղաքական, Կրեմլական, հասարակական գործիչը

«Այս զարմանահրաշ մարդուն հանդիպեցի Սպիտակում՝ իր ժնջակայքում:»

Նոր ուսումնական տարվա առթիվ մեկ միլիոն արժողությամբ հագուստ էր բերել աղետի գոտու դպրոցների առաջին և երկրորդ դասարանցիների համար: Սպիտակն աղետից հետո փոքր-ինչ փոխվել էր. մարդիկ դժվարությամբ տխրության ստվերը քաղաքից վանել էին ուզում:

(“77” 1993թ. նոյեմբերի 5)

Այդ «զարմանահրաշ» մարդը մեր հայրենակից Վոլոդյա Արամայանի Բաղայանն էր: Սա առաջին դեպքն էր, որ սպիտակցիները անմասնավոր պահին զգացել էին նրա անուր ձեռքի կարիքն ու անհրաժեշտությունը: Իսկ դժբախտության պահին մնան անհատների ներկայությունն անհրաժեշտություն է:

Ընդունված գեղեցիկ ավանդույթ կա՝ վտանգի պահին դիմացիներն ձեռք մեկնելու, նյութապես օգնելու բարի կամեցողություն: Աղետների, պատերազմի, որբացած երեխաների, սովի ու կարիքի առկայության պայմաններում ժողովրդի մեջ ծնվում են բարեգործներ ու բարեգութ մարդիկ: Բայց ուրիշ է, երբ մարդը ժողովրդի բարոյական կերպը պահելու համար է կազմակերպում այդ օգնությունը: Շատ-շատ պանծալի հայրերի և մայրերի բարեգործությունը դարերի շնչով է ողողված ու դարերի վավերագրերում պիտի պահպանվի: Այս պահին անվարան ու առանց երկմտելու կարող ենք ասել, որ Վոլոդյա Բաղայանի կողմից արված բարեգործությունները իրենց ծավալով, բովանդակությամբ, նպատակաուղղվածությամբ հարևան են մեր մեծ բարերարների կողմից արածին: Այժմ քվարկել այն բոլորը, ինչ արվել է Վոլոդյա Բաղայանի կողմից, հնարավոր չէ, սակայն անտարբեր անցնել արվածի կողքով և չքվարկել նրանցից մի քանիսը, նույնպես հնարավոր չէ: Եկեղեցու կառուցում Մալաթիա - Սեբաստիա համայնքում, 2,5 մլն. ռուբլու արժողությամբ հագուստի, սննդամթերքի, ծխախոտի օգնության կազմակերպում հերոսական Արցախին, դրամական օգնություն «Հրաշյա Աճառյան» համալսարանին, առանձին անհատների, ծերանոցների, մանկատների, հիվանդանոցների, Նու-

բարաշենի մեկուսարանին, Երևան-Սոչի ավիոփարին գոհ գնացածների հարազատների այցելության կազմակերպում Սոչի, բուհերի գերազանցիկ ուսանողներին կրթաթոշակների հատկացում ... ու այսպես շարունակ արված ու ընթացքի մեջ գտնվող բազում գործեր, պլաններ ու ծրագրեր: Վոլոդյա Բաղայանի աշխատանքային կենսագրությունը բաց տեղ չունի. սկսած Սպիտակի շաքարի գործարանում շարքային աշխատողից մինչև ԽՍՀՄ քիմիական արդյունաբերության հսկաներից մեկի՝ Երևանի քիմիական արդյունաբերության տնօրեն անցած ուղին եղել է արտադրության հմուտ կազմակերպչի ինքնահաստատման ու ինքնաբացահայտման ճանապարհ, որը հեքիաթային գործությամբ չէ, որ ի հայտ է եկել, այլ սեփական էնտուզիազմի, նախաձեռնության ու տքնաջան աշխատանքի արդյունք ու արգասիք են:

Այս բոլորին զուգահեռ 1991թ.-ից ցայսօր Վոլոդյա Բաղայանը գտնվում է քաղաքական կյանքի թոհուրոհում: Գերագույն հորիզոնի և Աժ-ի երեք գումարում սպիտակցիները ծայր են տվել իրենց գավակին, իսկ երկու անգամ էլ նա Ազգային ժողովում գործունեություն է ծավալում կուսակցության մանդատով:

Վ. Բաղայանը հայտնի է ոչ միայն պետական, քաղաքական, այլ հասարակական ակտիվ գործունեությամբ: Նրա անմիջական նախաձեռնությամբ ստեղծվել և գործում են ռուս-հայկական, հայ-վրացական, հայ-աջարական գործարար համագործակցության ընկերակցությունները և նա համարվում է այդ ընկերակցությունների համանախագահը: Նրա ղեկավարած կազմակերպությունները, առանց երկրորդելու պետական կառույցներին քրտնաջան, հետևողական

ու երկարատև երկխոսության արդյունքում հասել են շոշափելի արդյունքների: Այդ ընկերակցությունների ակտիվ գործունեության շնորհիվ կազմակերպության անդամ երկրների միջև ավելացել է ապրանքաշրջանառությունը, նոր լիցք է հաղորդվել ներդրումներին, սկզբնական շրջանում բացվել է մեր երկրի հարավային դարպասը՝ գործարկվել է Հայաստան-Իրան ճանապարհը, իսկ վերջին տարիներին նորմալ երթևեկություն է սկսվել Հայաստան-Վրաստան ճանապարհով: Վերջին չորս տարիների ընթացքում Վ. Բաղայանը ավելի շատ գործ է արել ռուս-հայկական, հայ-վրացական հարաբերությունները և երկու ժողովուրդների բարեկամության պատմության էջերը հարստացնելու, առկա արհեստական հակասությունները և առաջացած հիմնախնդիրները լուծելու ուղղությամբ: Դրանք նաև նրա անձնական հարաբերությունների ու կապերի արդյունք են:

Վոլոդյա Բաղայանը Հայաստանը ուժեղ ու հաստատ, իսկ Սպիտակը վերակառուցված ու զարգացած տեսնելու ցանկությամբ է լցված: Մեր Վոլոդյան իր մնան անուր ու պինդ որդիների հզոր ձեռքի կարիքն զգացող հայրերից կլիկլալ քաղաքացին է, ու որտեղ կա մնան մվիրյալը, կա ու կլինի գործը, որին առաջիկա տարիներին ակամատես կլինենք բոլորս: 60-ը բոլորած մեր հայրենակցին մաղթում ենք քաջառողջություն, եռանդ, կորով և ավյուն երկրորդ 60-ուն ավելի արգասաբեր գործունեություն ծավալելու համար:

Ֆահրադ Ափուջանյան
«Լուսարձակ» թերթի գլխավոր խմբագիր

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԸ



Նուշիկ Սամվելի Նահապետյանը ծնվել է 1938թ. Սպիտակի շրջանի Գեղասար (Թափաղի) գյուղում: Հայրը ժամանակին եկեղեցուն ծառայող սարկավար էր:

վագ էր: Եվ մանկությունից Նուշիկն ստացել է Հայ առաքելական եկեղեցու հորդորներն ու յուրացրել վարքականությունները: Նրա հայրը նաև արվեստասեր մարդ էր, նվագում էր ժողովրդական մի քանի գործիքներ, ինչը նույնպես իր ազդեցությունն է թողել Նուշիկի ներաշխարհի ձևավորման վրա: Նա դարձրել է գերազանց առաջադիմությամբ: Նուշիկը ստեղծագործել սկսել է դեռևս դպրոցական տարիներից: Նա ավարտեց գյուղի յոթնամյա դպրոցը և այլևս բախտ չունեցավ շարունակելու ուսումը: Դրա փոխարեն նա անձնվիրաբար աշխատեց կոլտնտեսությունում՝ 14 տարեկանում ղեկավարելով ճակնդեղագործական օղակը, պարզակտոր

վեց «Աշխատանքային արիության համար» մեդալով, ամուսնացավ, ունեցավ 5 երեխա, որի համար ևս արժանացավ մեդալի և այժմ ունի 13 թոռ: Բոլոր երեխաներն ամուսնացած են, իսկ այս լուսանկարում նա գրկել է արդեն իր թոռուհու երեխային: Նուշիկ Նահապետյանը ողջ կյանքում գրել է բանաստեղծություններ: Առանձին բանաստեղծություններ տպագրվել են «Պիոներ կանչ», «Ավանգարդ» թերթերում, սակայն ամբողջությամբ տպագրված որևէ գիրք չունի: Երկրաշարժի ժամանակ նրա ձեռագրերից շատերը ոչնչացան, բայց կան նաև փրկվածներ: Տպագրում ենք 70-ամյա Նուշիկ Նահապետյանի բանաստեղծություններից մի քանիսը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Սպիտակի մուսվորակներ» իկ-ն Հայաստանի ՓԱՉ-ՁԱԿ հիմնադրամի արակցությամբ Սպիտակի տարածաշրջանում անց է կացնում հաշվապահների վերապատրաստման դասընթացներ և վանաթղթերի խորհրդատվություն հետևյալ թեմաներով՝

- ՊԱՍՆԱԹՄՆԵՐ՝
- 1. «ՀՀ հարկային օրենսդրության պարզաբանումներ»
 - 2. «ՀՀ աշխատանքային օրենսդրության պարզաբանումներ»
 - 3. «Հաշվապահական հաշվառում»
 - 4. «Շուկայագիտություն»
 - 5. «Կառավարում»
 - 6. «Ֆինանսական կառավարում»
 - 7. «Մարդկային ռեսուրսների կառավարում»
 - 8. «Արտադրության կառավարում»
 - 9. «ՓՄՉ- հասարակություն» կապերի ստեղծում
 - 10 Վաճառող-վաճառողուհիների դասընթաց

- ԽՈՐԳՐԱՑՎՈՒԹՅՈՒՆ՝
- 1. Ձեռնարկության տնտեսական գործունեության վերլուծություն
 - 2. Ներդրումային և զարգացման ծրագրերի կազմում
 - 3. Գործարար ծրագրերի մշակում
 - 4. Ձեռնարկության կառավարման բարելավում
 - 5. Մարքեթինգի բարելավում
 - 6. Շուկայի ուսումնասիրություն
 - 7. Ձեռնարկության զարգացման խորհրդատվություն (OD)
 - 8. Հաշվապահության վարում և ֆինանսների կառավարում
 - 9. Հարկային և մաքսային խորհրդատվություն
 - 10. Իրավաբանական խորհրդատվություն

Դասընթացներին և խորհրդատվությանը մասնակցողներին տրվում է վկայական:
Մանրամասնությունների համար զանգահարել 2-30-38, (094) 34-56-94, (0322) 2-13-70 հեռախոսահամարներով:

ՎԵՐ ԿԵՆԱՄ ԳՆԱՄ

Վեր կենամ գնամ, շրջեմ սարերը, Բաղեմ հոտավետ վառ ծաղիկները, Բերեմ նվիրեմ իմ սիրելիին, Հայտնեմ իմ սերն անմոռնալի:

Նազելի աղջիկ, երզվում եմ ես քեզ, Որ սիրտս ու հոգիս հափշտակել ես. Դու հմայիչ ես անչափ ու չնաշխարհիկ, Ինձ մոտեցիր, աղաչում եմ, արի մոտիկ:

Ծաղկանց բուրմունքը այնքան դուրսիչ չէ, Որբան որ քոնը՝ երկնային փերի, Անման պատկերիդ դարձել եմ գերի, Գեթ մի բառ ասա, հոգիս չմարի:

ՍԱՐԻ ԼԱՆՋԻՑ

Ես Նուշիկն եմ գեղասարցի, Շատ դառն օրեր ճաշակեցի, Ազգս տեսավ երկրաշարժ, Եվ Սուսգայիք, և տեղաշարժ, Եվ պատերազմ՝ անկասկալիս, ճանապարհին, Աղերսում եմ՝ հուր հավիտյան Թող որ ների հայը հային, Եվ թող սրտանց նորեն սիրի հայը հային:

Սարի լանջից բխող ջուրը, Գալիս հասնում է ձեր դուռը, Դու չգիտես՝ նրա հետ եմ Սիրուղ գերուս արցունքները:

Ես ապրում եմ, օ~, մեն մենակ, Այս մենավոր ժայռերի տակ, Սպասում եմ կարոտով լի. Ա~խ, երբ կգաս, իմ սիրելի:

Տոջրվում եմ ես ծարավից, Այս ջուրը չի գովացնում ինձ, Սիրտս է լալիս, հառաչում, Բանի որ սերդ է ինձ տանջում:



ԱՐԵՎԱՇՈՂԻ ՅԻՆԱԿՐԱՍԱՆ 175-ԱՄՅԱԿԻ ԱՈՒԹՎ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՄ

(դրվագներ Արևաշող գյուղի սրբեղծման պատմությունից)

Արևաշող (Չիզդանալ) գյուղը հիմնադրվել է համալեզգիների կողմից այդ մասին արժանահիշատակ փաստեր կան, «Կովկասի մասին տեղեկությունների ժողովածու» գրքում, որտեղ նշված է. «Չիզդանալ».- գյուղ նորից կազմավորված և սերված Յանամլի գյուղից, Փամբակ գետի ձախ, փոքրիկ վտակի ափին, Չիբուխլի լեռան ստորոտում: 46 տուն, 256 արական, 221 իգական սեռի բնակիչներով, հայեր, գրիգորյանական հավատքի («Сборник сведений о Кавказе», т. V, Тифлис, 1880г.): Համանվեցիներից բացի գյուղի հիմնադիրների շարքում եղել են նաև այլ վայրերից եկածներ, օրինակ՝ Համբարյանները:



Գյուղի հիմնադրման վերաբերյալ հավաստի աղբյուր էր նաև եկեղեցու շենքի քարե հուշակոթողի արձանագրությունը, ուր նշված էր, որ եկեղեցին կառուցվել է 1877թ. թիֆլիսաբնակ ուն Գալուստ Իսախանյանի կողմից: Գյուղի մեծահասակները նշում էին, որ եկեղեցին կառուցվել է գյուղը հիմնադրելուց 3-4 տարի հետո, ուրեմն Համանվուից եկել են 1873թ.:

Գյուղի տարածքում սկսած Համանվուի սահմաններից մինչև «Ֆրանգի ձոր» կոչվող տեղավայրը հայտնաբերվել և մինչև այժմ էլ հայտնաբերվում են ավերակների ու զերեզմանոցների հետքեր, որից երևում է, որ այդտեղ բնակավայր է եղել անհիշելի ժամանակներից, որի անեմախոսուն վկաններ կա թռչնաբուծական ֆաբրիկայի հյուսիսային մասում՝ Սպիտակի և Արևաշողի վարչական սահմանագծում հայտնաբերված Արտաշեսյան սահմանաքարերից մեկն է: Այդ ժամանակաշրջանի բնակիչները հավանաբար եղել են հեթանոսական հայկական ցեղախմբեր: Սակայն 18-19-րդ դարերում, մինչև 1825-27թթ. ռուս-պարսկական պատերազմները բնակվել են պարսկական ցեղեր, որոնք արտավայրեր են հիմնել գյուղի հյուսիսային մասում, Բազումի սիգավետ լանջերին: Ասածս կարող են հաստատել մի շարք տեղանունների թվարկմամբ՝ «Յաթարներ», «Աբաս Սիրգու յուրդ», «Հասաս աղի դոբի» և այլն: «Յաթար» պարսկերեն նշանակում է հյուրատեղի, մնալու ապրելու տեղ, հավանաբար այդ տարածքում եղել է զորանոց, որովհետև Չիզդանալի խոսվածքում մինչև վերջերս պահպանվում էր «թուրքը եկել, յաթար էր տվել» արտահայտությունը, այսինքն զորքը ճամբար էր հիմնել: Իսկ պատմությունից հայտնի է, որ Աբաս Սիրգան պարսկական բանակի գրախիտամատար է եղել, որը հենց Համանվուում ճակատամարտ է տվել ռուսական զորքի դեմ և պարտվել ու նահանջել է: Նույնը կարելի է ասել նաև Հասաս աղի՝ Հասաս խանի մասին, որը նույնպես պատմական դեմք է: Նրա մասին մանրամասն գրել է մեծ հայրենասեր Խաչատուր Աբովյանը իր «Վերջ Հայաստանի» վեպում: Ամենայն հավանականությամբ 1825-27թթ. գյուղը լքվել է և շուրջ 50 տարի եղել է անախյ, սակայն դրանից հետո մինչև նոր գյուղի հիմնադրումը թե՛ գյուղատեղը, թե՛ հանդամասերը օգտագործվել են համանվեցիներ կողմից որպես գոմախաներ և արոտավայրեր: Հենց այդ հանդամասերի անուններն էլ տրվել են համանվեցիների կողմից, օրինակ՝ «Ղուգասանց ձոր», «Թու-


ծահասակներից մեկի՝ Քոչարանց Մինասի պատմածը: «Տեհան, որ հնար չկա, խաբարը հասավ «Մամեստիզին» նա էլ Գյուլնրի էր նստում: Մի օր տեհանը մի կակառդավոր մառթ էկավ, կանչեց երկու կողմի մառթեկանցից ու կարգրեց՝ թե որտեղ են ուզում գյուղը շինվի: Նրանք իրանց ստեցին, սրանք՝ իրանցը: Ասեց, ոչ նրանց ասածը, ոչ էլ ծեր ասածը: Հանեց «ըռուլետկեն», տվեց երկու քահեկի, ու «Ներքի բագերի» սահմաններիցը չափեց մինչև «Ֆրանգի ձորը»: Եննա, հանեց թուրքն ու կարանդաշը, կրեց-չնջեց, ասեց, դե հմի չափեք ըստեղան՝ «Ֆրանգի ձորիցը» չափելով էկան, կայնեցին «Բաջի Մաքրանց» տների տեղը: Հենց ստեղն էլ կըլի գեղի մեշտեղը՝ տները շինեք սրանից վերև ու սրանից ցած»: Ուրեմն ըստ էության, ոչ «Ներքի բագերում», ոչ էլ «Վիրի բագերում» գյուղ չի հաստատվել:

Ուշագրավ փաստ է այն, որ գյուղատեղը միայն հիմնադրողների ցանկություններով չի բաժանվել, այլ այնտեղ եղել է իշխանությունների միջամտությունը: Այդ մասին է վկայում գյուղի հատակագծի ամենահասարակ ուսումնասիրությունը: Ոչ մի գյուղական բնակավայր այդքան «պլանավորված», քաղաքաշինական հատակագիծ չի ունեցել, որքան՝ Չիզդանալը: Գյուղը ոչ միայն ուներ կենտրոնական փողոց, որից բաժանվում էին գյուղամիջյան ուղիղ ճանապարհներ, ապա բաժանվում էին ըստ ազգությունների, նաև՝ հասարակական նշանակություն ունեցող մի քանի կառույցներ և շինություններ: Գյուղի հյուսիսային մասում՝ «Թալեք» կոչվող տեղանքում, գործել են Սալարհոմանց (Համբարյաններ) պատկանող 2, իսկ կենտրոնական մասում Մխանց (Մխիթարյաններ) ջրաղացները, գյուղի սկզբնամասում գործել է Թաթանց (Թաղեսայաններ) ձիթահանքը: Գյուղում ապահովված է եղել ոռոգման և խմելու ջրերով: Այդ նպատակով կառուցվել և մինչև այժմ էլ գործում են 3-4 կմ. երկարությամբ, գյուղը գոտևորող 4 և գյուղի շրջակա տարածքները ոռոգող 5 առու: Այդ առուներն ունեցել են իրենց անվանումները՝ «ժամի արխ», «Կալերի արխ», «Ղուլի արխ» և «Սելափատար»: Գյուղը խմելու ջրով ապահովելու նպատակով «Ֆրանգի ձոր» և «Թաթանց ձոր» տեղավայրերում կառուցված ջրավազաններից, որոնք նույնպես գործում են մինչև այժմ, կավե խողովակներով գյուղ է բերվել խմելու ջուրը: Գյուղի կենտրոնական փողոցի վրա էլ միմյանցից 500-600մ հեռավորության վրա կառուցվել են աղբյուրներ, որոնք ունեցել են ցրահեռացման կառույցներ: Այդ աղբյուրները նույնպես ունեցել են իրենց անվանումները՝ «Սրիազանց ախպուր», «Ափրգանց ախպուր», «Կոքորանց ախպուր», «Հաթանանց ախպուր», «Մարդիրսանց ախպուր»: Հետագայում, երբ գյուղն ընդարձակվել է, կառուցվել է ևս մեկը՝ «Պապրկանց ախպուր»: Զմոռանանցը նշել, որ նախկին գյուղի հարավային սահմանը եղել է «Ուհանանց» (Կոստունյաններ) և «Տոնոանց» (Համբարյաններ), իսկ հյուսիսում՝ «Մալխարոնանց» (Համբարյաններ), ու «Բիծոնց» (Բիծյաններ) տները:

Պետք է նշել, որ գյուղի հիմնադրումը հեշտությամբ չի ընթացել: Համանվուի հնաբնակները չէին ցանկացել, որ այդտեղ գյուղ հիմնադրվի, քանի որ դրանով նրանք զրկվում էին գյուղի և նրա հարակից տարածքները տնօրինելուց, սակայն գյուղ հիմնադրել ցանկացողները համառ են գտնվել, այդ պատճառով ցանկացողների և չցանկացողների միջև մեծ վիճաբանություններ են եղել՝ ընդհուպ մինչև տուրուղմփոցը, փայտակալը: Ըստ որում այդ կռիվները եղել են ոչ միայն տարբեր, ոչ այրուհակից անձանց, այլև հարազատների, անգամ եղբայրների միջև: Մի խոսքով գյուղի հիմնադրման փաստը հաստատվել է, սակայն հետագայում հարց է ծագել, թե՞ որտեղ հիմնել այն: Մեծահասակները պատմում էին, որ եկողները ցանկացել են գյուղը հիմնադրել «Ներքի բագերում», իսկ նրանց հակառակորդները ստիպում էին գյուղը հիմնել «Վիրի բագերում»: «Բակեր».- բառի բացատրությունն ըստ Արդի հայերենի բացատրական բառարանի նշանակում է. տանը, բնակարանին կից տարածքը, որը պարսպապատված է, իսկ գյուղացիների խոսքում համահունչ է նաև «ավերակ» արտահայտությանը: Ուրեմն, ավերակներ են եղել թե՛ գյուղատեղի ներքևում, թե՛ վերևում՝ հյուսիսային կողմում: Ի միջի այլոց երկու բնակավայրերն էլ ունեցել են իրենց սրբատեղիները: «Ներքի բագերի» հարավային կողմում վեր բարձրացող սարի վրա է գտնվում «Սբ. Գրիգոր» մատուռը, իսկ «Վիրի բագերի» հյուսիսային հատվածում, «Ֆրանգի ձորի» հարավային եզրին՝ «Սբ. Սահակ» ուխտատեղին, հավանաբար իր ժամանակին Սահակ Պարթևը այցելել է այդտեղ՝ քրիստոնեությունը քարոզելու և դպրատուն հիմնելու առաքելությամբ: Գյուղատեղի հիմնադրման գործը մեծ վեճի առարկա է եղել, որը հաստատում էին գյուղի մեծահասակները: Գյուղաբնակ, երկարամյա մանկավարժ Բաղիշ Աթևյանը պատմում էր, որ իր հիշողության մեջ մնացել է մե-

ծահասակներից մեկի՝ Քոչարանց Մինասի պատմածը: «Տեհան, որ հնար չկա, խաբարը հասավ «Մամեստիզին» նա էլ Գյուլնրի էր նստում: Մի օր տեհանը մի կակառդավոր մառթ էկավ, կանչեց երկու կողմի մառթեկանցից ու կարգրեց՝ թե որտեղ են ուզում գյուղը շինվի: Նրանք իրանց ստեցին, սրանք՝ իրանցը: Ասեց, ոչ նրանց ասածը, ոչ էլ ծեր ասածը: Հանեց «ըռուլետկեն», տվեց երկու քահեկի, ու «Ներքի բագերի» սահմաններիցը չափեց մինչև «Ֆրանգի ձորը»: Եննա, հանեց թուրքն ու կարանդաշը, կրեց-չնջեց, ասեց, դե հմի չափեք ըստեղան՝ «Ֆրանգի ձորիցը» չափելով էկան, կայնեցին «Բաջի Մաքրանց» տների տեղը: Հենց ստեղն էլ կըլի գեղի մեշտեղը՝ տները շինեք սրանից վերև ու սրանից ցած»: Ուրեմն ըստ էության, ոչ «Ներքի բագերում», ոչ էլ «Վիրի բագերում» գյուղ չի հաստատվել:

ՄԱՐԾԱԿ ԲԱՂԱՄՅԱՆԻ ԻՆՔՆԱԳԻՐԸ ՊԱՏՄՈՒՄ Է ՈՐՊԵՍ ՄԱՍՈՒՆԸ



Վերջերս հույրընկալվել էի մեր հայրենակից, ծնունդով Արևաշողից, պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Հրաչիկ Արմենակի Ոսկանյանի ընտանեկան հարկում: Մեր միջև ծայր էր առել սրտառու մի գրույց, որի ծիրն սկսվում էր հայրենի գյուղի հիմնադրման որոշ հարցերի քննարկումից և ավարտվում ներկա քաղաքական իրավիճակի քննությանը: Բազմակատար պրոֆեսորը անաչառ ու խոր վերլուծությամբ գնահատական տվեց արդի քաղաքական խմորումներին, որոնք իրենց սթափ ու իրատեսական բովանդակությամբ արժանի էին հրատարակման, միայն փոստում են, որ ես դրանք գրի չառաքերքի միջոցով հանրությանը ներկայացնելու համար:

Տանտերը ճոխ հյուրասիրություն էր կազմակերպել, գրույցը հավանաբար թեժացել էր նաև այն պատճառով, որ մենք մեկը մյուսի հետևից դատարկում էինք



իջևանում պատրաստված թթի օղու լցվող բաժակները: Այն իմ բարեկամին էր նվիրել հայտնի պետական, քաղաքական գործիչ Վլադիմիր Դարբինյանը: Ջերմ գրույցի ընթացքում հարգելի պրոֆեսորը հիշեց, որ Մոսկվայում՝ Լոմոնոսովի անվան համալսարանի ասպիրանտուրայում սովորելու ժամանակ հայ ժողովրդի փառապան զավակ մարշալ Հովհաննես Բաղրամյանը իրեն նվիրել է «Իմ հուշերը» գրքի ռուսերեն հրատարակությունը և այժմ այդ գիրքը նա պահում է որպես մասունք: Հենց այդ ժամանակ էլ որոշեցի Հ. Բաղրամյանի մակաբույությունը հրատարակել մեր թերթում, որը կատարում են մեծ սիրով:

Յ. Ավուջանյան

ՈՐՈՇԵԼ ԵՆՔ ՍԵՂԱՆ ՆՍՏԵԼ ՅՈՒԹԸ ՈՐՌՈՎ ...



Սեզանում արդեն հազվադեպ են հանդիպում այնպիսի ընտանիքներ, որոնք երկուսից ավելի երեխաներ են ունենում: Իսկ սա գրեթե ազգային ողբերգություն է: Իսկապես, սրտի ցավով են ուզում հիշեցնել մեր մայրերին, որ զավակներ կազմակերպվելու հայրենիքին՝ նրանք կասեցնում են մեր երկրի առաջընթացը և կոչ են անում նրանց, որ շատ զավակներ ծնեն, քանզի երեխաներն են մեր ապագան և երկրի վաղվա տերը: Ուզում են մատնացույց անել Փոգարան գյուղի բնակիչներ՝ ամուսիններ Կարեն ու Լիդա Գրիգորյանների երիտասարդ ընտանիքը, որտեղ արդեն լույս աշխարհ են եկել վեց երեխաներ և վալետում են իրենց երջանիկ մանկությունը: Այս երիտասարդ ամուսինները չեն վախենում ապրուստի հայթայթման այսօրյա դժվարություններից, րանք որոշել են ունենալ յոթերորդ երեխան, որպեսզի կատարվի իրենց ուղղված ժողովրդական օրհնանքը՝ յոթը որդով սեղան ստեղծ:

Իսկ ինչպե՞ս է, որ դուք չեք վա-

խնուն մեծ ընտանիքը պահելու հոգսից.- հարցնում ենք նրանց: - Իսկ դուք ի՞նչ եք կարծում, երբ հիսունական թվականներին մեր ժողովրդի յուրաքանչյուր ընտանիքում ծնվում և մեծանում էին յոթ և ավելի երեխաներ, նրանք ինչպե՞ս էին կարողանում հոգալ իրենց ապրուստը, մի՞թե այն ժամանակ ավելի լավ էր երկրի դրուսությունը, մեզ հարցով պատասխանում են ընտանիքի տատիկն ու պապիկը, որոնք և հիմնականում օգնում և խրախուսում են երիտասարդներին՝ երեխաներին խնամելու և պահելու հարցում:

- Ժողովրդական խոսքն ասում է՝ «Երեխան, որ ծնվում է իր «դասաբն» էլ Աստված հետն է տալիս», դրա համար էլ վախենալու բան չկա, աշխատող մարդը կարող է ապրել, որտեղ էլ, որ լինի, - բացատրում են նրանք: Օրինակ՝ իրենք ապրում են իրենց հողից և անասուններից ստացվող եկամուտներով և չեն դժգոհում ու ուզում են անպայման ունենալ յոթերորդ երեխան:

Նպատակներդ ի կատար: Ամեն:
Արդյուծա Թաղեսայան



ՆԵՐՔԻՆ - 2008

ղացավ դուր գալ Եվրոպային: Այս անգամ Հայաստանին ծայրեր էին տվել նաև այնպիսի երկրներ (Մակեդոնիա, Սան-Մարինո, Բոսնիա, Ալբանիա, Մոլդովա, Իսլանդիա, Սերբիա), որտեղ հայոց սփյուռքի գործունե ղեր չի խաղում: Մեր երկրի օգտին առավելագույնը՝ 12 միավոր տվեց 8 երկիր՝ Բելգիան, Ֆրանսիան, Լեհաստանը, Չեխիան, Նիդերլանդները, Հունաստանը, Ռուսաստանը, Վրաստանը: 10 միավոր մեզ նվիրեցին Կիպրոսը և Իսպանիան, իսկ 8 միավոր՝ Սան-Մարինոն, Բուլղարիան, Իսրայելը:

Առաջին տեղը գրավեց Ռուսաստանը ներկայացնող երգիչ Դիմա Բիլանը (272 միավոր), 2-րդը՝ Ուկրաինայի ներկայացուցիչ Անի Լորակը (230 միավոր), 3-րդը՝ Հունաստանը ներկայացնող Կալոմիրան (218 միավոր): Ինչ վերաբերում է առաջին անգամ մրցույթին մասնակցած Ադրբեջանին, ապա նա զբաղեցրեց 8-րդ տեղը:

Հաջորդ Եվրատեսիլը կկայանա Ռուսաստանի մայրաքաղաք Մոսկվայում:

Մամուլից

Ներքին - 2008-ը Հայաստանի համար հանելի ավարտ ունեցավ: Մեր ներկայացուցիչը՝ Սիրուշոն 199 միավորով զբաղեցրեց 4-րդ հորիզոնականը, ինչը ևս հաղթանակ է, քանի որ Սիրուշոն իր «Քելե, քելե» երգով ոչ միայն 4 հորիզոնականով բարելավեց մեր նախորդ երգիչների արդյունքը, այլև կարող

ԷՆԵՐԳԻԱՅԻ ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԿԵՆՑԱՂՈՒՄ

Ազգային գրապալատում թերթի ճոր համարները հանձնելիս գրապալատի աշխատակից Ալվեղլանա Մարգարյանը աշխատասեղանում ծանոթացա Ստեփան Պապիկյանի հետ: Նա առաջարկեց խմբագրությանը տրամադրել նյութեր, որոնք կօգնեն բնակչությանը կենցաղում խնայողաբար օգտագործել էլեկտրիկը:

Ահա և ներկայացնում ենք պրն. Պապիկյանի հեղինակած նյութերից մեկը:

Կենցաղում էլեկտրական էներգիան օգտագործվում է լուսավորության, ռադիո-հեռուստատեսային հաղորդումների լսելու և դիտելու, տարբեր սարքերի (փոշեծծիչ, լվացքի մեքենա, սառնարան) օգտագործման, սննդի պատրաստման համար: Լվացքի մեքենան կարող է ավելի արդյունավետ աշխատել միայն լրիվ բեռնվածությամբ շահագործվելու դեպքում: Փոշեծծիչները համեմատաբար քիչ էներգիա են պահանջում, երբ աշխատում են ռեժիմով, առանց գերբեռնման: Սառնարանը պետք է ժամանակին ազատել սառույցից, հետևել, որպեսզի երկար ժամանակ բաց վիճակում չմնա և հերմետիկ փակված լինի:

Ջրի ծորակը փակ և սարքին վիճակում լինելու դեպքում ևս էներգիայի խնայողություն կունենաք: Լուսավորության համար պետք է էներգիան օգտագործվի այն դեպքում, երբ ցերեկային բնական լույսը չի բավարարում: Բնակարանների ներքին լուսավորությունը կախված է կահավորումից, կահույքի դասավորությունից, գույնից և այլն: Մեծ նշանակություն ունի նաև ապակիների մաքրությունը, պատերի լուսավոր երանգները, վարագույնները: Այս պայմաններն ապահովելու դեպքում բնակարաններում էլեկտրական լուսավորության կարիքը կզգացվի համեմատաբար ուշ ժամերին:

Սննդի պատրաստման ժամանակ խոհանոցի ամանեղենի ճիշտ ընտրությունը նույնպես կարևոր նախապայման է էներգիայի խնայողության համար: Ընդհանուր առմամբ խորհուրդ չի տրվում մեծ ամանների մեջ պատրաստել քիչ քանակի կերակուր: Ամանը, որի մեջ կերակուր է պատրաստվում, պետք է ունենա հարմար կափարիչ: Այս ձևով կարող ենք խնայել էներգիայի մինչև քսան տոկոսը: Դետեք է օգտագործել հարթ հատակ ունեցող կաթսաներ: Խորհուրդը հատակի դեպքում էներգիայի շուրջ 30 տոկոսը կորչում է անօգուտ:

Էներգիայի խնայողության, կենցաղային տարբեր սարքերի օգտագործման ժամկետները երկարաժամկետ կամ արագափոխելու համար պահանջվում է ժամանակին անջատել այն էլեկտրական սարքերը, որոնց աշխատանքը անհրաժեշտությամբ չի թելադրված: Օրինակ, եթե մեր հանրապետության յուրաքանչյուր բնակիչ թեկուզև մեկ ժամ անջատի անտեղի վառվող 100 վատամանց էլեկտրական լամպը, ապա կխնայվի մոտ 80 հարյուր ԿՎտ.ժ էներգիա: Այսքան էներգիա ստանալու համար անհրաժեշտ է ջերմային էլեկտրակայանում այրել մոտ 30 տոննա վառելիք: Մեկ կիլոգրամ վառելիքը այրելու համար անհրաժեշտ է 2000 լիտր թթվածին: Մինչդեռ, այսօր կանաչ զանգվածները չեն հասցնում արտադրել անհրաժեշտ թթվածինը:

Սառնարանը համարվում է շատ էներգիա սպառող սարք, քանի որ այն միշտ միացված է ցանցին: Ժամանակակից սառնարանները ըստ ծախսած էներգիայի իրարից շատ քիչ են տարբերվում: Սառնարանի արդյունավետությունը կախված է նրա աշխատանքային ռեժիմից: Անհրաժեշտ է պահպանել շահագործման բոլոր պայմանները: Խորհուրդ չի տրվում սառնարանը տեղադրել ջերմության աղբյուրի մոտ (ջեռուցման մարտկոց, գազային սալօջախ) և այն տեղերում, որտեղ նրա վրա ընկնում են արևի ճառագայթները: Սառնարանը պետք է գտնվի խիստ ուղղահայաց դիրքում կամ ունենա փոքր թեքություն դեպի ետ: Անհրաժեշտ է պահովել սառնարանի ետևի մասում օդի ազատ շրջանառությունը: Սառնարանը չպետք է հենվի տաք պատին: Նպատակահարմար է

Յ. Ա.

ԱԼԲԵՐՏ ՆԱՄԲԱՐՉՈՒՄԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կյանքից անժամանակ ու անսպասելի հեռացավ Ալբերտ Գրիգորյանը (Շալիկո Բաղդասարյան): Ծնվել է 1937թ. Սպիտակի շրջանի Արևաշող գյուղում: Հայրը զոհվել է հայրենական պատերազմում, իսկ պատերազմից հետո մահացել է նաև մայրը և 12-ամյա պատանին մնացել է մեծ քրոջ ու նրա ամուսնու: Արաքսի և Արամայիս Ափուջանյանների խնամքին: Դպրոցն ավարտելուց հետո 3 տարի ծառայել է խորհրդային բանակում: Այնուհետև սովորել ու դարձել է տրակտորիստ-մեքենավար: Շուրջ 50 տարի աշխատել է շրջանի գյուղատնտեսական, շինարարական կազմակերպություններում, որպես մեխանիկատոր: Որտեղ էլ, որ աշխատել է Ա. Գրիգորյանը մշտապես վայելել է գործընկերների ու ժողովրդի սերն ու հարգանքը: Լավ աշխատանքի համար ղեկավարության կողմից արժանացել է պարգևների և խրախուսանքի: Երկրաշարժից անմիջապես հետո մասնակցել է փրկարարական աշխատանքների:

Նա 3 զավակների հայր էր, 8 թոռների պապիկ:


Ալբերտ Գրիգորյանի հիշատակը միշտ վառ կմնա հարազատների, մերձավորների, բոլոր ճանաչողների սրտերում:

Հարազատներ

ԱՐՅՈՒՆԵՐՈՏ ԸԱԿԱՏԱԳԻՐ

Ա կանատեսի վկայությամբ են ուզում գրել նրա մասին, որը դեռևս 18-ը մեր բոլորած մի հեքիաթ պատանի էր դարձել արդեն, մի նորաբողբոջ ծաղիկ, որը չիացրեց բացել իր թերթերը, և անհագուրդ շնչեր ու զգար աշխարհի, գեղեցիկի, բարու ու հավերժականի շուրջ: Եվ այդ նորաբողբոջ ծաղիկն էլ ունի կենսագրություն, հիշողություն, տարիք ու նաև՝ ճակատագիր... Հենց այդ ճակատագիրն էլ գարնանային այս երկնքում, երբ հանկարծ օրն է սևանում ու մութ ամպերն են արևի սիրտը փորձում ծվատել, խլեց մարդկային մի կյանք և գրանցեց հավերժի ճամփորդի մատյանում: Մանուկյանների սրտում ասեց դաշույն խրվեց, ամբողջ աշխարհը ամպի սնան մթազնեց նրանց առանց այն էլ սպեղանի չգտած սիրտը, նրանց՝ բզկտված հոգիները: Խորապես ցավում ենք քեզ համար, սիրելի Սամվելիկ՝ դու այնքան գեղեցիկ էիր ու հրեշտակային, այնքան անուշ ու համակրելի:

Եվ գարնանային խայտանքի ու



արևոտ, ծաղկոլ գարթոնքի հետ մեկտեղ թո սուրբ շիրմի հողաթմբի վրա թող միշտ բուրբեն թարմ ու ամուշահոտ ծաղիկներ, քանզի դու ևս մի նորաբողբոջ ծաղիկ էիր՝ ճակատագրով դատապարտված: Մորմոքում ու սգալենց մեր սրտերում ու հոգիներում միշտ բարի կհիշենք թո սրբացված անուրը:

Լուսինե Մակարյան

Ֆահրադ և Ֆելիքս Ափուջանյանները խոր վշտով հայտնում են սիրելի քեռու՝ Ալբերտ Համբարձումի Գրիգորյանի մահը:
Ֆահրադ և Ֆելիքս Ափուջանյանները խորապես ցավակցում են Նորիկ Սուքիասյանին , նրա սիրելի որդու՝ Էդիկի ողբերգական մահվան առթիվ:
«ԼՈՒՍԱՐՉԱԿ» թերթի խմբագրակազմը խորապես ցավակցում է Նորիկ Սուքիասյանին , նրա սիրելի որդու՝ Էդիկի ողբերգական մահվան առթիվ:
Ֆահրադ և Ֆելիքս Ափուջանյանները, Աշոտ Պետրոսյանը վշտացած են Ստասիկ Սողոմոնի մահվան առթիվ և ցավակցում են հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:
Խաչիկ և Դավիթ Մաշակարյանները խորապես ցավակցում են Նորիկ Սուքիասյանին , նրա սիրելի որդու՝ Էդիկի ողբերգական մահվան առթիվ:
Ժորա Հերիքմազյանը խորապես ցավակցում է Նորիկ Սուքիասյանին , նրա սիրելի որդու՝ Էդիկի ողբերգական մահվան առթիվ:
Ժորա Հերիքմազյանը խորապես ցավակցում է Սուքիասյաններին և Հակոբյաններին իրենց սիրելի՝ Ռոման Հակոբյանի ողբերգական մահվան առթիվ:
Արևաշողի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվը ցավակցում է տնօրեն Թերեզա Գրիգորյանին, Արման Խաչիկյանին, Գյուլնարա Մխիթարյանին հոր, պապի, հորեղբոր, սիրելի՝ Ջալիկ Գրիգորյանի մահվան առթիվ:
Արևաշողի միջնակարգ դպրոցի 10-րդ Ա դասարանի աշակերտները և դասղեկ Չնաշխարիկ Դազարյանը ցավակցում են Ծովակ և Արուսիկ Գրիգորյաններին նրանց սիրելի պապի՝ Ջալիկ Գրիգորյանի մահվան առթիվ:

Գլխավոր խմբագիր՝ ՖԱՐՄԱԴ ԱՓՈԶԱՆՅԱՆ
 Խմբ. հասցեն՝ ք. Սպիտակ, Ա. Ավետիսյան փող. 7/23, հեռ. 2-30-38, 2-35-38
 Կայքէջ՝ <http://www.lusardzak.com>
 Ստորագրված է տպագրության 05.06.2008թ.

Համարի թողարկման պատասխանատու՝ Ֆ. ԱՓՈԶԱՆՅԱՆ
 Համակարգչային շարվածքը՝ «Լուսարձակ» թերթի խմբագրության: Ծավալը՝ 1 տպագր. մասով:
 Տպագրանակը՝ 700 օրինակ
 Գրանցման վկայական 01Ս000130

Տպագրվել է «ԽՄԻ տպագրատուն» ՍՊԸ-ում:
 Վանաձոր, հեռ.՝ 4-02-29:

Նյութերը չեն գրախոսվում, չեն վերադարձվում:
 Հեղինակները պատասխանատու են փաստերի ճշտության համար:

Լրատվական գործունեությունը իրականացնող՝ «Ափուջանյան և որդիներ» ՍՊԸ
 ք. Սպիտակ, Ա.Ավետիսյան 7/23: Գրանցման վկայական՝ 03 Ա 05 23 38, տրման օրը՝ 05.08.02թ.
 Գինը պայմանագրային: